ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 88 -Ա

« 07 » ԱՊՐԻԼԻ 2025Թ.

ՆՈՒՆԵ ԲԵԳԼԱՐՅԱՆԻՆ «ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՄԱԼԻՇԿԱՅԻ Մ. Վ. ԼՈՄՈՆՈՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, 16-րդ հոդվածի 1-ին մասի 1.1 կետով, «Հանրակրթության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության, տնօրենի նշանակման և բողոքարկման կարգը հաստատելու մասին» N 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 39–րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 14-ի N 1653-Ա հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովի 2025 թվականի մարտի 25-ին կայացած նիստի թիվ 222 արձանագրությունն և Նունե Բեգլարյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Նունե Բեգլարյանին նշանակել «ՀՀ Վայոց ձորի մարզի Մալիշկայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում, նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ հինգ տարի ժամկետով: Աշխատանքը սկսել 2025 թվականի ապրիլի 7-ից:
2. 2025 թվականի ապրիլի 7-ից Նունե Բեգլարյանին ազատել «ՀՀ Վայոց ձորի մարզի Մալիշկայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնից:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի ապրիլի 7-ից:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք. Եղեգնաձոր